ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻՍԼՈՎՈԴՍԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Մայիսի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՌԴ Կիսլովոդսկի քաղաքապետ Սերգեյ Դեմիդենկոյին՝ քաղաքի հայ համայնքի ղեկավար Վալերի Գալուստովի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում կարևորվեցին նման փոխայցելությունները, երկու բարեկամ ժողովուրդների միջև դարավոր կապերի զորացումն ու արդյունաշատ համագործակցությունը: Անդրադարձ կատարվեց նաև հայ համայնքի կյանքին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Մայիսի 17-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Վրաստանի գլխավոր դատախազ Ջուրաբ Աղեիշվիլիին՝ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով բարձրաստիճան հյուրի անդրանիկ այցը Հայաստան և Սուրբ Էջմիածին, կարևորեց պետական մակարդակի նման հանդիպումները, երկու պետությունների տարբեր կառույցների միջև ձևավորվող սերտ հարաբերությունները և համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ Վրաստանում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի կարգավիճակի խնդրին: Ամենայն Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ այս, ինչպես և Վրաստանում գտնվող մի շարք հայկական եկեղեցիների շուրջ ստեղծված խնդիրները Վրաստանի իշխանությունների աջակցությամբ բարվոք լուծում կստանան:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մայիսի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց տեսչական առաքելությամբ Հայաստանում գտնվող Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներին՝ ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Կյունիի ուղեկցությամբ:

«Մեր հոգին միշտ ուրախությամբ է լցվում, երբ Սուրբ Էջմիածին են այցելում ներկայացուցիչներ Ֆրանսիայից՝ ներկայացնելով Ֆրանսիայի բարեկամ ժողովուրդը և պետությունը: Առանձնակի ջերմությամբ ու բարեկամությամբ են հատկանշված մեր երկու պետությունների և ժողովուրդների հարաբերությունները, ինչը որոշակիորեն զգալի է թե՛ Ֆրանսիայում և թե՛ Հայաստանում»,- նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետը բարեկամական մթնոլորտի ձևավորման գործում կարևոր նկատեց ինչպես երկու պետությունների և ֆրանսաբնակ հայ համայնքի ներդրումը, այնպես և Ֆրանսիայի դեսպանների առաքելությունը:

Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը, սերն ու օրհնությունը փոխանցեց Ֆրանսիայի ժողովրդին և իշխանություններին՝ հիշատակելով նաև, որ Ֆրանսիան միակ պետությունն է, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել է օրենքի ուժով:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց նաև Իտալիայի Հանրապետության Տարածքային նախարար Էնրիկո Լա Լոջջայի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Ողջունելով հյուրի անդրանիկ այցը Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարևորեց երկու երկրների միջև զարգացող հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ իրենց ջերմությամբ և արդյունավետությամբ դրանք կհասնեն այն մակարդակին, ինչպիսին Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների պարագային է: Հայոց Հայրապետը նաև հիշեց երջանկահիշատակ Հովհաննես-Պողոս Բ Պապի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչը համագործակցության նոր էջ բացեց երկու Եկեղեցիների պատմության մեջ: «Մեր ժողովուրդների համանմանությունները արդյունքն են մեր հավատի»,- նշեց Հայոց Հայրապետը՝ կարևոր նկատելով իրենց նկարագրով նույնական երկու ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդումը:

Իտալիայի Տարածքային նախարարը իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ իր այցը չէր կարող ամբողջական լինել, եթե չայցելեր Սուրբ Էջմիածին:

հանդիպման ընթացքում ՀՀ Տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանը ներկայացրեց քննարկումների արդյունքները և ռեգիոնալ համագործակցության ծրագրերը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻԿՈԼԱՅ ՌԻԺԿՈՎԻՆ

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ՌԴ Դաշնային ժողովի անդամ, հայ-ռուսական միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի համանախագահ Նիկոլայ Ռիժկովին և նրա գլխավորած պատվիրակությանը:

«Պրն Ռիժկովին մեր ժողովուրդն առանձնահատուկ կերպով է սիրում և հարգում: ...Իր անձի միջոցով մեր ժողովուրդն իր սերն է արտահայտում նաև ռուս ժողովրդի նկատմամբ, որի հետ ունենք դարերի ջերմ բարեկամական, եղբայրական հարաբերություններ, որոնք ամրապնդվում են և զորանում շնորհիվ ձեզ պես նախանձախնդիր անձանց ինչպես Ռուսաստանի մեջ, այնպես-և Հայաստանում, որոնք որ ամեն ջանք ի գործ են դնում՝ պահպանելու մեր ժողովուրդների եղբայրական բարի կապերը»,- նշեց Նորին Սրբությունը իր խոսքում:

«Երբ մենք գալիս ենք Հայաստան, մենք մեր պարտքն ենք համարում այցելել այս սրբավայրը՝ Սուրբ Էջմիածին, և հանդիպել Ձերդ Սրբությանը: ...Մենք միշտ արժեվորել ենք մեր հարաբերությունները, և մեր բարեկամությունը պատմական արմատներ ունի»,- ասաց պրն Ռիժկովը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար և հիշելով դեռևս 1988 թ. դեկտեմբերին Հայաստանի համար դժվարին օրերին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ ունեցած իր հանդիպումը: Նա անդրադարձավ նաև Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների ջերմ բարեկամությանը՝ նշելով, որ կարևորում է այն, որովհետև Եկեղեցիները շատ են օգնում բարոյական, ընկերային հարցերի լուծման մեջ:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Մարգսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ռուսաստանի Դաշնության Տարածքային զարգացման նախարար Վլադիմիր Յակովլևին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց հայ համայնքի նկատմամբ Վլ. Յակովլևի տածած հոգածությունն ու սերը: Նորին Սրբությունը մեկ անգամ ևս վերհիշեց նրա կարևոր աջակցությունը Մանկտ Պետերբուրգում Ս. Կատարինե հայոց

եկեղեցու վերաբացման գործում: Ի գնահատություն այս ջերմ վերաբերմունքի՝ 2000 թ. Հայոց Հայրապետի Սրբապառ Կոնդակով պրն Յակովլևն արժանացել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի:

«Անչափ ուրախ ենք, որ այսօր նոր հնարավորություններ են ընձեռված, որպեսզի մեր ժողովրդի հետ ձեր կապերն առավել սերտացնեք ու զորացնեք: Ձեր հոգու սերն ու զգացումներն են, որ մղում են Ձեզ մեր ժողովրդի հետ այդ կապերը հարատև պահպանելու»,- նշեց Ամենայն Հայոց Հայրապետը:

ՌԴ Տարածքային զարգացման նախարարը, շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար, կարևորեց հայ-ռուսական հարաբերությունների և դարավոր կապերի ամրապնդումն ու զարգացումը:

Քննարկվեցին նաև երկու երկրների համագործակցության ոլորտներին և ապագա ծրագրերին վերաբերվող հարցեր:

Հանդիպմանը ներկա էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության նորանշանակ դեսպան Նիկոլայ Պավլովին:

Շնորհավորելով ՌԴ դեսպանին նոր նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջև ձևավորված բարի հարաբերություններին և ժողովուրդների եղբայրական կապերին: Նորին Սրբությունը կարևոր նկատեց այդ ավանդների հետագա ամրապնդումն ու զարգացումը՝ մատնանշելով Հայաստանյայց Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների դերն ու առաքելությունն այդ բարեկամության զորացման գործում:

Դեսպանն իր հերթին հավաստիացրեց, որ իր նախորդների հետևողությամբ պիտի շարունակի պահպանել և սերտացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՌԴ դեսպանատան միջև ձևավորված համագործակցության բարի և ջերմ հարաբերությունները:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետն իր բարեմաղթանքներն ու օրհնությունները փոխանցեց տիար Պավլովին՝ հաջողություններ ցանկանալով դիվանագիտական իր առաքելության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ